



“ՓՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԲ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ԳՍԵ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16.


ՀԱՏՈՐ ԻԱ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՓԵՏՐՈՒԱՐ 1, 1892

ԹԻՒ 2

ԹՈՉՆՈՑ ԺԱՅՈՒ

Երբ կը խօսինք այսօրհիս շատ բնակիչ ունեցող տեղերուն վրայ, մեր միտքը կ'իջնան Լոնտոնի, Փարիզու, Նիւ Եորքի և Կոստանդնուպոլսոյ նման մեծ քաղաքները: Բայց եթէ ճայք (հարկէն հողու) վիճակագրութիւն ընէին, մեծ քաղաքներէն շատը հազիւ աւելի պիտի յիշէին քան Սահարա անապատը՝ մարդոց վիճակագրութեանց մէջ: Յերաւի, Կոստանդնուպոլիս ճայ թռչնոց պատկառելի բազմութիւն մը ունի, որք վոսփորի մաքրիչներն են. բայց նա հազիւ կրնայ համարուիլ աւելի քան մեծ գիւղ մը Ովկիանոսին մէջ դտնուող այն առանձին ժայռին քով, ուր քիչ անդամ կը տեսնուի մարդկային էակ: Այս ջրային թռչնոց մեծագոյն քաղաքներէն մին — թերևս ճայից Լոնտոնը — այն է զոր կը տեսնէք հոս: Կը դտնուի Հիւսիսային Գլխուն մօտ Նորվեկիոյ հիւսիսային ծայրը, և Նորվեկիացիք զայն կը կոչեն Սվիրհոլթքիւպըն, որ կը նշանակէ Թռչնոց ժայռ:



ՀԻՆԳ ՀԱՄԱՌՈՑ ԿԱՆՈՒՔ ՆՈՐԱՀԱՍԱԿ ԲՐԻՍՏՈՆԷԻՑ ՀԱՄԱՐ

- Ա. Երբեք զանց մի ընէք օրական առանձին աղօթքը: Եւ երբ կ'աղօթէք, յիշեցէք թէ Աստուած ներկայ է, և թէ կը լսէ ձեր աղօթքները: (Եբր. ԺԱ. 6.)
- Բ. Երբեք զանց մի ընէք Սուրբ Գրոց առանձին ընթերցումը: Եւ երբ կը կարդաք, յիշեցէք թէ Աստուած կը խօսի ձեզ, և թէ դուք պարտիք հաւատալ անոր խօսքերուն և վարուիլ ըստ այնմ: (Յովհ. Ե. 39.)
- Գ. Երբեք մի թողուք որ օր մը անցնի առանց ջանարու ընել քան մը Յիսուսի համար: Ամէն երեկոյ խորհրդածեցէք այն բաներուն վրայ զորս Յիսուս ըրած է ձեզ համար, և յետոյ հարցուցէք դուք ձեզ, «Ես ի՞նչ կ'ընեմ Անոր համար» (Մատ. Ե. 13-16.)
- Դ. Եթէ որոշ չգիտնաք թէ այս ինչ գործը ուղի՞ղ է թէ սխալ, գնացէք ձեր սենեակը, ծնկան վրայ եկէք և խնդրեցէք Աստուծոյ օրհնութիւնն անոր վրայ: (Կող. Գ. 17.) Եթէ չէք կրնար ընել զայս, ուրեմն սխալ է

այդ գործը : (Հռովմ. ԺԳ. 23.)
 Ե. Չեր քրիստոնէութիւնը երբեք մի առնուք քրիստոնեաներէ. մի ըսէք թէ որովհետեւ այս ինչ այն ինչ անձր կ'ընէ այս ինչ գործը, ես ալ կ'ընեմ : (Բ կոր. Ժ. 12.) Պէտք է հարցնէք ձեր անձանց, «Ի՞նչ պիտի ընէր Յեսուս, եթէ իմ տեղս ըլլար» : և ջանացէք հետեւիլ Անոր : (Յովհ. Ժ. 27.)



ԴՂԵԱԿ ԵՒ ՏՆԱԿ

Այս և յաջորդ երեսին վրայ գրանուող պատկերաց մէջ կը տեսնուի իռլանտայի ամենէն գեղեցիկ դղեակներէն մէկուն արտաքին կողմը և ամենէն ստորին տնակներէն մէկուն ներքին կողմը : Այս դղեակն է շատ ընդարձակ դետիններու մէջտեղը, չրջապատեալ պարտէզներով, անտառներով, լեռներով և ձկնալից վտակներով, որք ամէնքն ալ կը վերարբրին Լորտ Մասարինի, դղեակին հարուստ տիրոջ : Մօտը կը գտնուի Անթրիմ անուն փոքրիկ քաղաքը և միայն քանի մը մղոն հեռին է Լոխ Նիհ, Բրիտանեան կղզեաց մեծագոյն լիճը և Եւրոպայի մեծագոյն լիճերէն մին : Եթէ դղեակին բնակիչք ուզեն փոխանակել չրջակայ հանդարտ գեղեցկութիւնը գործունեայ քաղաքի կենաց հետ, կրնան երկաթուղեաւ ճանապարհորդութեան ելլել և իբր մէկ ժամէն հասնիլ Պէյֆասթ, իռլանտայի ճարտարարուեստական մեծ կեդրոնը, և յետոյ՝ Տրային, իռլանտայի մեծագոյն քաղաքը :

Տեսալք որ կը ցուցուի միւս պատկերին մէջ, կը գտնուի Քոննթի Նահան գին, իռլանտայի աղքատագոյն մասին, մէջը Ունի մէկ սենեակ միայն, և ոչ երբեք պատուհան : Քրդաստանի շատ տուներուն նման առաստաղին ծակէն կ'ընդունի բոլոր իւր լոյսը և օդը, և անկէ դուրս կ'ելլէ ծուխը : Քրդաստանի տնակէն սա տարբերութիւնն ունի որ հոս փոխանակ թրիք վառուելու թոնիրի մէջ, գետնաղը կը վառուի կրակարանի վրայ :

Տեսակին և դղեակին մէջտեղի տարբերութիւնը մեծ է, բայց ասկէ չը հասկցուիր թէ նոյն է բնակչաց երջանկութեան տարբերութիւնն ալ : Կրակը նայող այդ փոքրիկ ալլիկը որ իւր ձեռքն ունի պաճուճապատանք մը, ցորչափ ունի առատ ուտելիք, այնպէս գոհ և երջանիկ է՝ ինչպէս Լորտ Մասարինի դուստրը : Աղջկան մայրն անտարակոյս շատ տգէտ կին է, և հաւանականապէս շատ դժուար

են իւր կատարելու գործերը, բայց զերծ է այն բազում հոգերէն և անձկութիւններէն որ կը ծանրանան դղեակին տիրուհոյն վրայ : Եթէ այդ աղքատիկ կինը անցնէր կղզին անդին, և տեսնէր Անթրիմի դղեակին գեղեցիկ դիրքը և հոս կահ կարասին, թերևս պիտի լցուէր նախանձով և խորհէր թէ այդպիսի բաներու տէր եղողը երջանիկ կ'ըլլայ : Բայց կը սըխալէր ասոր մէջ : Եթէ կարող լինէինք կռուել այլոց երջանկութիւնը, հաւանականապէս պիտի հասկնայինք որ անակին և դղեակին երջանկութեան տարբերութիւնը փոքր է քան որչափ կը խորհինք : Այլստասէր աղքատք պարտին ունենալ պատեհութիւն բարւոքելու իրենց վիճակը : սա է սպա-

նի մը վայրկենէն տղան եկաւ, ետ բերելով ստակին մնացորդը : Տոքթորն ըսաւ, «Այդ ստակը քուկը թող ըլլայ» : Բայց տղան չուզեց ետ առնուլ զայն, ըսելով թէ իւր հայրը պիտի յանդէմանէր զինք : Փոքրիկ տղայի մը վրայ տեսնուած այսպիսի հաղուագիւտ բնաւորութիւնը գրաւեց տոքթորին ու շագրութիւնը, և ասոր վրայ սկսաւ նա խնամով քննել տղան : Յայտնի կ'ըլլէր թէ աղքատ էր նա. անոր փոքրիկ վերարկուն պատառատուն էր և կարկատուած՝ գրեթէ ամէն տեսակ կը տաւներով, և իւր տարատը (խոփալ) այնքան գոյներ ստացած էր, որ դժուարին էր ըսել թէ ինչ էր անոր նախնական գոյնը, բայց յոյժ վայելուչ էր և մաքուր : Տղան հանդար-



ՄԻՔ ՄԱՍԱՐԻՆԻ ԴՂԵԱԿ ԵՒ ՏՆԱԿ

գային մեծ խնդիրներէն մին : Սակայն ովոր ունի առատ առողջարար ուտեստ, և մտաւոր և բարոյական մշակութիւն ձեռք բերելու պատեհութիւն, պատրաստ ունի ամէն ինչ որ էական է բարձրագոյն երջանկութեան : Բայց այս բաներն ունեցող մարդն անգամ գուցէ լինի ապերջանիկ, սակայն յանցանքն իւրն է և ոչ իւր պարագաներուն :

ՓՈՔՐԻԿ ՏՈՔԹՈՐԸ

Մինչ Տր. Պայրըն օր մը կը մտնէր տուն, տեսաւ շատ փոքր տղայ մը, որ ըսաւ իրեն թէ կ'ուզէր ուտելիք մը, այսինքն բանջարեղէն : Տոքթորը հարցուց թէ այս փոքրիկ տղան խնութեամբն է : «Ոչ, հայրս է խնութեամբն», պատասխանեց տղան անմիջապէս : Տոքթորն ըսաւ, «Բեր ինձ քիչ մը դուրս», և մտաւ տուն ստակ տալով որպէս զի գինը վար դրուելով մնացորդը իրեն դարձուէր : Քա-

տութեամբ համբերեց բժշկին քննութեանց որ բռնելով նորա բազկէն կը քննէր երեսը, և որ իվերջոյ ըսաւ, «Գուն աղուոր տղեկ մը կը նմանիս, չե՞ս ուզեր գալ ինձ հետ բնակիլ և ըլլալ տոքթոր մը» : «Այո, կ'ուզեմ», ըսաւ տղան : «Չափահաս մարդու պէս կը խօսի», ըսաւ տոքթորը իւր մատներով չոյնելով նորա գլուխը երբ կը բաժնուէր անկէ :

Անցան քանի մը շաբաթներ, և ահա օր մը սպասաւորն եկաւ ըսաւ տոքթորին թէ ձեռքը ծրարով փոքրիկ տղայ մը վարը կը կենայ, և կը սպասէ տեսնել տոքթորը, և թէ իւր գործին վրայ ուրիշ մէկուն բան մը ըսել չուզեր : «Վեր թող գայ», ըսաւ տոքթորը, և քանի մը վայրկենէն իւր առջև կը տեսնէր դեռուժ ծախող այն տղան, որ հագած էր նոր, թէպէտ կոշտ, ձեռք մը հանդերձ. մազերը սանտրուած էին շատ մաքրութեամբ, կոշիկները փայլուն էին, և իւր բազ-

կաց վրայ կը կրէր ծրար մը տունը գործուած թաշկինակի մը մէջ փաթթուած : Ծանրութեամբ հանելով իւր գլխարկը և վար դնելով զայն իւր ծրարով մէկտեղ, մտեցաւ տըքթուրին և ըսաւ, «Էս եկայ, տէր:» «Ինչո՞ւ եկար, տղաս:» «Ձեր հետ ապրելու և տըքթուր ըլլալու համար:» ըսաւ տղան յոյժ պարզմտութեամբ:

Քիչ մնաց որ տըքթուրը ծիծաղէր բարձրաձայն, բայց փոքրիկին լուրջ ծանրութեան առջև զսպեց ինքզինք, և թէպէտ յիշեց տղին հետ ունեցած իւր նախկին խօսակցութիւնը, կը զգար նաև թէ պէտք չունէր իւր ընտանեաց վրայ յաւելուած մը ընելու:

«Հայրդ հաւանած է հոս գարուդ:» հարցուց: «Այո, տէր:» «Ի՞նչ ըսաւ:» «Էս պատմեցի անոր թէ դուք կ'ուզէք որ ձեզի դամ, բնակիմ ձեր հետ և ըլլամ տըքթուր մը. նա ըսաւ թէ դուք էք շատ բարի մարդ մը, և թէ ես կըրնայի դալ ձեզ այն ինչ հանդերձներս պատրաստուէին:» «Էս մայրդ ինչ ըսաւ:» «Ըսաւ թէ Տր. Պայրըն կը կատարէ ինչ որ կը խօստանայ կատարել, և թէ Աստուած ինձ բարիք պատրաստած է:» Թեոյ յաւելցուց տղան, «Էս ձեռք մը նոր հանդերձ հագած եմ, և ահա հոս, ծրարին մէջ, կայ ուրիշ մը ևս:» քակելով թաշկինակը և յերևան հանելով գանձը, որոց մէջ կը գտնուէին երկու փոքրիկ շապիկ, ձեան պէս սպիտակ, և զոյգ մը սատրինջաձև դիժերով («Բլոյզ») մաքուր գոգնոց, այնպէս ինամով ծալուած որ յայտնի էր թէ միայն մօր մը ձեռքէն կրնային ելած ըլլալ:

Տըքթուրին զգացումներն արթնցան տեսնելով այն աներկևան և աներկբայ փատահութիւնը որով այն աղքատ լծակիցք իրեն կը յանձնէին իրենց զաւակը — և այսպիսի զաւակ մը: Երկար ժամանակ չտեսցեց իւր մտածութիւնը. խորհեցաւ շամբին մէջ նետուած Մովսիսին վրայ որ յանձնուած էր Նախախնամութեան. և ի վեր քան զամենայն՝ այն Մանկան վրայ որ տարուեցաւ Եգիպտոս — այն աստուածային փրկչին վրայ որ օրհնած էր փոքր մանուկները: Կանչեց իւր կինը և ըսաւ անոր, «Դուչան, սիրելիս, մենք կ'աղօթենք և կ'ընկերացուց մէջ որպէս զի

Աստուած ողորմի բոլոր մատաղ մանկանց, այնպէս չէ:» «Մնչու չա,» ըսաւ կինը զարմացած, «և յետո՞յ:» «Էս փրկչին ըսած է, «Ով որ ասանկ աղջայ մը ընդունի իմ անունովս, զիս կ'ընդունի:» Ուրեմն ընդունինք այս տղան Մնոր անունով, և ինամ տանինք անոր:»

Այս ժամէն այն երկու լծակիցք ընդունեցին տղան իրենց սրտին և տան մէջ: Այն ժամանակը չէին տեսներ թէ այդ մանուկը որ իրենց առջև կը կենար, պիտի լինէր դարուն ամենէն երեւելի բժշկաց և ամենէն բարի մարդոց մին. չէին տեսներ թէ այս

մը նստած լրագիր կը կարդար, «մեծ հայր, ես այսօր եօթը տարեկան եղայ, կարճ տարատ պիտի հազնիմ և պիտի սկսիմ գպրոց երթալ:» «Ինչո՞ւ, ինչո՞ւ:» ըսաւ ծերունին, լրագիրը վար դնելով, «այս ո՞րչափ բաներ մէկտեղ պատահած են:» Մեծ հայրը գրեթէ այնչափ հեռի կը գտնուէր իւր կենաց վախճանէն որչափ Ֆրից՝ իւր կենաց սկիզբէն, և մեծ տարբերութիւն կը տեսնուէր մէկուն ծնած մարմնոյն, ճերմակ գլխուն և տկար շարժուածքին և միւսին փայլուն պայծառ դանդաղ ներուն մէջտեղ որ կը շարժէին և կը



ԻՊԱՆՏԱԿԱՆ ՏՆԱԿԻ ՄԸ ԵՆՐԻՆ ԿՈՒՐԸ

փոքրիկ արարածը որ յանձնուած էր իրենց գթութեան, սահմանուած էր լինել իրենց ցուպն և դաւաղանը ծերութեան մէջ, պաշտպան՝ իրենց դատեր, և որդիէ մը աւելի՝ իրենց անձանց: Բոլոր այս բաները ծածկուած էին յայնժամ, բայց անոնք ուրախութեամբ ընդունեցին տղան, զոր, կը հաւատային թէ, Նախախնամութիւնը յանձնած էր իրենց խնամոց: Եթէ երբեք բարեգործութիւն մը իւր վարձքն ընդունած է, ահա գեղեցիկ օրինակ մը:

ՅԻՒՑ ԻՆՉՊԷՍ ՄԵԾՑԱԻ

«Մեծ հայր,» աղաղակեց փոքրիկ տղայ մը ցատկելով արևոտ սրահի մը մէջ ուր ծեր, սպիտակ մազերով մարդ

ցնցուէին երբ տղան ցատկելով կը փոփոխէր իւր քայլերը: Եւ սակայն մեծ հայրը և Ֆրից էին սերտ բարեկամներ, և իրար կատարելապէս կը սիրէին և կը հասկնային: «Էս հիմա, մեծ հայր, զիս չափէ պատին դէմ:» շարունակեց մեր գպրոցական նոր աշակերտը, «այնպէս որ կարող ըլլամ ըսել ճիշդ թէ ո՞րչափ մեծցած եմ միւս շրջանն սկսելու ժամանակս:» Մեծ հայրը առաւ իւր մատիտը, և մինչ Ֆրից կը կանգնէր կունակը պատին տուած, շատ հաստատուն, հանդարտ և ուղիղ, տղային գլխուն վրայ դրաւ իւր ակնոցին տուփը անոր ճիշդ բարձրութիւնն ստուգելու համար, և նշան ըրաւ մաքուր, ճերմակ պատին վրայ, և հոն գրեց տղային անունը և տարիքը և ամսուան օրը և ամբիս:

«Բայց կեցիք, Ֆրից», ըսաւ մեծ հայրը, երբ նա կը վազէր կ'երթար, «ես միայն քու մէկ երրորդը չափեցի»: Ֆրից թուեցաւ շփոթած: «Դու միայն մարմին ունիս», հարցուց մեծ հայրը: «Ոչ, կարծեմ միտք ալ ունիմ», պատասխանեց Ֆրից, բայց տարակուսելով: «Այո, ունիս միտք մը որով կ'ընես գումարման գործողութիւններդ, և սիրտ մը՝ որով սիրես զԱստուած և նորա արարածները: Չե՞ս տեսներ որ ես չափեցի քու մէկ երրորդը միայն: Եկուր, և չափեմ միտքդ: Ո՛րչափ թուաբանութիւն գիտես: Մինչև բազմապատկութիւնը: Լաւ: Եւ դասդ երկրորդ ընթերցարանին մէջ կը գրաւնուի: Շատ լաւ: Գրէ անունդ հոս իմ յուշատետրիս մէջ, դրէ նաև միւս բաներն ալ, որպէս զի իմ քովս ունենամ քու ընթերցանութեան, գրավարժութեան և թուաբանութեան չափերդ:»

Ֆրից այս խօսքերէն մեծապէս հաճոյք զգաց, և առնելով մատիար՝ գրեց շատ ազեղ գիրերով, «Ֆրէտէրիք ճոնս, Բազմապատկութիւն և երկրորդ ընթերցարան»:

«Եւ ի՞նչ իմ սրտիս համար», հարցուց փոքրիկ տղան: Մեծ հայրը շատ լուրջ կերպարան մը առաւ այս հարցման վրայ և լուռ կեցաւ վայրկեան մը: Յետոյ ըսաւ, «Ուրախացուցի՛ր մայրդ այս առաւօտ ժամանակին ազօրժքի ինչեքով»: «Ոչ»: «Փնտռեցի՛ր քու փոքրիկ քրոջդ Լուսիի պաճուճապատանքը որ կորսուեցաւ երէկ»: «Ոչ»: «Տիկին փարսնսի տարի՛ր այն մեղրը զոր ինդրեց մօրմէդ իւր հազին համար»: «Մեծ հայր, ես բոլորովին մոռցայ զայդ»:

Երեւոյնին բան չխօսեցաւ, այլ սկըսաւ գրել իւր յուշատետրին մէջ, և Ֆրից նայելով անոր ուսին վրայէն, կարդաց սա խօսքերը. «Ան որ իր եղբայրը չափեր՝ որ կը տեսնէ, զԱստուած՝ որ շտեմներ, ինտո՞ր կրնայ սիրել»:

Տարի մը անցած է, և մենք դարձեալ կը գտնենք զՖրից իւր մեծ հօր ծնդաց վրայ: Մեծ հօր քայլերն այս անգամ աւելի յարմարաշարժ են և ձայնը աւելի տկար է և աչաց տեսողութիւնը՝ քիչ մը աւելի աղօտացած: Ֆրից ևս քիչ մը փոխուած է: Անոր մազերուն դանդուրները աւելի կարճ են, և տաբաթին սրունքները՝ աւելի երկայն, իւր ուսերն՝ աւելի լայնցած, և երբ կանակը պատին կը դնէ, ահա՛, վեր բարձրացած է անցեալ տարուան նշանէն: Այժմ կը կարդայ Զորորդ ընթերցարան, և փոքր ի շատէ ծանօթ է կոտորակներուն, և երբ կը գրէ իւր անունը, գիրերը ինչապէս կամ ցրուելու կերպարանքը չունին: «Միւս չափերն ինչպէս եղան նայինք», ըսաւ մեծ հայրը: Ֆրից լուռ կը մնայ. բայց ծեւրունին իւր բազկին մէջ կ'առնու զնա և կ'ըսէ քաղցրութեամբ, «Լսեցի որ մայրիկդ կ'ըսէր երէկ թէ Ֆրից իւր ամենէն մեծ մխթարութիւնն է: Լուսի լացաւ երբ տեսաւ որ Ֆրիցի արձակուրդն աւարտեցաւ, և ծերունի տիկին փարսնս ըսաւ թէ ինք պիտի կորսուէր առանց այդ տղին օգնութեանը»:

Դարձեալ գրեց մեծ հայրը իւր փոքրիկ գիրքին մէջ, և թէպէտ գիրերն աղէկ չէին, Ֆրից աղէկ մը կարող եղաւ կարդալ զայն այս անգամ: «Թէ որ դուք արքունական օրէնքը կը կատարէք, քու ընկերդ սիրես քու անձիդ պէս, աղէկ կ'ընէք»:

«Արդ, Ֆրից, տղաս, այս է ամենէն լաւ աճումը զոր ունեցար այս տարի», ըսաւ ծերունին:

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ԸՆԹԵՐՅՈՒՄ

Կ'ուզէինք գիտնալ թէ այս թերթը կարդացող իւրաքանչիւր տղայ և աղջիկ արդեօք ամէն օր կը կարդայ Սուրբ Գիրքը — թէ դուք Աստուծոյ խօսքէն կ'առնու՞ք մաս մը այնպէս կանոնաւոր կերպով ինչպէս կը վայելէք ձեր կերակուրը կամ սրտանքը: Մենք շատ աղէկ գիտենք որ նորահասակ անձանց և երբեմն աւելի մեծերուն ևս հասարակ փաստն է «Ես ժամանակ չունիմ» խօսքը: Մենք ձեռնէ յոյժ շատերէն լսած ենք որ այսպէս կ'ըսեն իրենք զիրենք արդարացունելու համար, թէ դպրոցի և տան գործերը, մարմնամարզը և խաղերը հազիւ կ'աւարտին և ահա օրն երեկոյ կ'ըլլայ և դուք շատ յողմած կ'ըլլաք. մենք այս խօսքերը դոց գիտենք:

Բայց կեցէք խորհեցէք վայրկեան մը, և պիտի կրնա՞ք ըսել իրօք թէ «Ճամանակ չունիմ» խօսքը իրաւացի փաստ է: Գիտէք որ բոլոր ժամանակը ձերն է, և ամէն մէկ օր որ կու գայ, ձեզ կը պատկանի գործածել: Արդ, կարևոր խնդիրը սա է թէ ի՞նչ պիտի ընտրէք այն շատ մը բաներուն մէջէն որ կրնաք ընել ձեր ժամանակին մէջ: Եթէ ի հաշիւ կ'առնուք որ և իցէ բան

և ամէն բան որ ձեր առջև կը խրոչնուին, ինչո՞ւ համար ձեր Սուրբ Գիրքը կարդալը զանց կ'առնէք և անոնք օրէ օր չբացուած կը մնան գրասեղանին վրայ: Բայց այս պարագային մէջ դուք ուրիշ պատճառ մը ունիք յիշելու, պարզապէս ժամանակ չունինք ըսելու տեղ, այնպէս չէ:

Դուք մինչև որ Սուրբ Գիրքը չսկսէք կարդալ կանոնաւոր կերպով՝ չէք կրնար հասկնալ թէ որչափ փաստ կը կրէք ձեր զանցառութեամբ: Շատ օգուտ պիտի քաղէք եթէ միայն օրէնաւոր կերպով կարդաք զայն. պիտի հասկնաք որ Սուրբ Գրոց ընթերցումն ոչ միայն պիտի օգտուիք ձեր քրիստոնէական կենաց մասին, այլ այդ պիտի ըլլայ բանալի մը որ պիտի բանայ ձեզ շատ մը օգտակար բաներու դուռեր: Օգուտներէն մին որ Սուրբ Գիրք կարդային պիտի քաղէք, սա է որ աւելի հաճոյք պիտի զգաք եկեղեցւոյ պաշտամունքէն: Ո՛չ ապաքէն երբեմն կ'ըսէք թէ քարոզը չոր և ցամաք էր և թէ զայն կարող չեղաք հասկնալ, մինչ թերևս ուրիշ լսողներու համար պարզ էր այն և շահեկան: Թերևս կայ շատ լաւ պատճառ մը թէ ինչու համար ձեզ չեղաւ այն հաճելի և օգտակար: Յառաջիկայ կիրակի դիտեցէք թէ ձեր քարոզիչը չէ՞ խօսիր այնպիսի բաներու վրայ որ կը վերաբերին քրիստոսի, կամ Դաւթի կամ Մովսիսի և կամ Աբրահամու կենաց, որոց անտեղեակ էք. մտածեցէք, և ահա պիտի տեսնէք որ քարոզիչն խօսած բաներէն հաճոյք չէք զգար և օգուտ չէք քաղեր վասն զի անտեղեակ էք անոնց, և դուցէ այս պատճառաւ կը կորսնցունէք քարոզին ամենէն աղէկ մասը: Այսպիսի պարագայից մէջ աղէկ կերպն է ձեր չհասկցած բաներուն վրայ քննութիւն ընել այն ինչ տուն կը դառնաք եկեղեցիէն, և յայնժամ աւելի աղէկ պատրաստուած պիտի ըլլաք յաջորդ անգամուն համար:

Ուրեմն անմիջապէս որոշեցէք որ ամէն օր այս ինչ ատեն պարապէք Սուրբ Գիրք կարդալու:

Աւերկայի Միսիսնաբաց ընկերութեան կողմէն,
 Տնօրէն Գ. ԿՐԻՆ
 Ֆինանսներու Ս. ՊԱՐՆԸՄ.
 Ֆրիզան խան:

ԿՈՍՏԱՆԴՆՍԻՍ
 Ի ՏՊԱՐԱՆԻ ՊՐՈՍԱԵԱՅ